

Գործազուրկին Սղօթքը

Տիկին ԶԱՊԵԼ ԵՍԱՅԵԱՆԻՆ

5 + 5 + 5

4 + 4 + 4 + 3

Տէ՛ր, ըսէ՛ դեռ կա՞ս . . . : Կը յիշե՞ս անէծքդ՝ առաջին մարդուն,
Անէ՛ծք որուն մինչեւ այսօր կ'այրէ խարանն անարդար . . .
Ճակտին քրտինքով լոկ իր հացն ուսել պարտադրեցիր դուն,
Եւ աշխատանին ըրիբ ցըկեա՞նըս պատիժի մ'հաւառար :

Արդ չենի աշխատիր . . . : Գործ չունինք : Քրտինք չենի քափեր հար-
կաւ,

Ա'լ մեր քաղցին, մեր ծարաւին պիտի չըսա՞յ յազենալ՝
Անդաստաններուդ, այգեստաններուդ ընծայումն ամրաւ : —
Կ'ուզե՞ս փորձել մեր մուրճին դէմ նակտիդ անհունն իբրեւ սալ . . . :

Տէ՛ր, ժա՛մ է այլեւս որ մարդն ի՞նի սրբէ վընիռդ անքընին :
Ամէն ժում Հա՛ց մեզի — մարմի՛նդ —, ինչպէս արիւնդ ալ, — Գինի՛ն :
Հա՛ց՝ երէ նոյն խսկ ան շաղուած չըլլայ քրտամբ մեր նակտին :

Կամարներուն տակ արփազօծ, կամարներուն տակ մըքին,
Թող մշտահոլով նըռընչէ Անիւն, անիւր նիւրէ :
Մարդն ա'լ չընըկնի՛ . . . Մարդն ա'լ չըտրքնի՛ . . . Վայելէ՛ . . . Ուսէ՛ :

29-3-32

ՕՂԻՆ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ

Նկարիչ բարեկամիս՝ ՄԵԼՔՈՆ ՔԵՊԱՊՃԵԱՆԻՆ

Աշխարհին դէմ վանդակուած երանուրի՛ն եսական . . .
Կը ջահէ տօ՞նն ափսէին՝ բազմոցին վրայ վերամբարձ . . .
Օղի՛ն բիւրեղ ու բուրեան, կա՛ր ու ծիածան հեշտարծարծ :
Ու բո՞ղի ու ձուկ ու ապուխտ ծիրապըտուդն ու լուրիա՞ն :

Համբը, միք գեհենի, թեհեղ բոցով մը հագուած,
Եղիմահամ՝ կը նուազէ՛... Ուտն ու շարդի՛ն արքեցման...
Կապրի, տանտէրը կ'ապրի՛, բազմոցին խորն ընկողման,
Երանուքիւնն եսական՝ աշխարհին՝ դէմ վամդակուած: -

...Ահա՝ վախճանն է ծէսին: Թողած լարերն ու փետուր,
Մատրոււակել կը փուրայ հինայուած ձեռքը ծիւնիուր...:
Եւ երկիւղած ու պազշոն, մարդն յետին ումար կ'ըմպէ...:

Կը պրիսմակէ՛, կը դրախտէ՛, հոլանարեւ ա'լ կ'ամպէ
Օդի՛ն - ուղի՛ն հայրերու, սի՛րտն անմբռուր՝ խաղողին...
Անխուած եւ անիծուած հանապազորդ բա՛ղցը օդին...:

ՆՈՐ ՕՐԵՐՈՒ ՕՐՈՐ

Կիրակնօրեայ սալերն այլեւըս չեն հնչեր,
— Հայորդինե՛ր, բնացէ՛՛ անդորր,—
Կիրակնօրեայ սալերն այլեւըս չեն հնչեր,
Զի վիրապին կապեալն այլեւըս չե՛ն յիշեր...:

Այլ կը մաշի՛ ժանգոս շղբան յամբ, յամբարար,
— Հայորդինե՛ր, դեռ բնացէ՛՛ խոր,—
Այլ կը մաշի՛ ժանգոս շղբան մի՛շտ, յամբարար,
Ժանիքներէն որ կը կրծեն դարէ ի դար:

Օր մ'ալ լրսէ՛ երբ ձիուն վրինչն անդունդն ի վեր,
— Եւ այն ատեն զարբէ՛՛ բոլորդ...
Օր մ'ալ տեսնէ՛ երբ ձիուն բռիչն անդունդն ի վեր,
Պայտին կայծով արծարծեցէ՛ ջահե՛րը ձեր:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Առարտեցա՛ւ ուզմն աւասիկ: Եւ յաղբեցի՛նք: Մե՛նք յաղբեցինք:
Ա'լ համայնակուլ չի սպառնար վիշապն ու կլափն իր անափ: -
Վիրակապերն իհմա ցնծուն՝ կ'արփածըփին բոսրապրօշ...
Եւ ժայռակա՞լ՝ թէլը տապալ, նակտին՝ բեւե՛ն մ'իբը ապարօշ:

Հո՛ծ իրիկուն՝ զա՞ղը ու մըքար : Նի՛նչն արդար՝ ոազմիկներուն :
Նահապետին սաղաւարտին վայրավատին կ'անհետին
Ցոլքերն ուկի : Վեհ ու սէզ՝ ան կը հսկէ՛ : Քընացէ՛ք . . .
Քընացէ՛ք ասողօրօր եւ արքնցէ՛ք արեգշիփոր :

Լուսաբա՛ց խաղաղութեան . . . : Թեւե՛ր սորտած – լուացումս արեան .
Թաղուած է ա՛լ դին վերջին : Կը հանգչին տէզ ու վահան :
Հողը՝ բաւալ, ջարը՝ ծաւալ եւ ծալ ի ծալ, եւ մուրն, եւ սալ, կոնդ
ու տապար՝
Ճըպոտին տակ ճանանչեղէն՝ կը հեղեղեն ձիգին համերզը բազմա-
լար :

Ու կը կոփեն, ու կը չափեն, կ'արօրադրեն, կը հիմնադրեն,
Մինչ կոցահա՞ր, անյարալէզ՝ կ'ոսկրանայ ա՛լ բռնակալ լէշն :
Ու վաշտերն որ՝ արթնածո՞ր՝ տարազրեցան մարտին մէշ մեծ՝
Նախ գերեվար, այժմ եղբայր, կը բերեն բուխ քրտինքն իրենց :

Այլ երեւ օր մը պատահի որ թէլ մը նոր ու դժայրեի :
Գայ Հայկաշէնը սանանել, արիւն սրսկել, անիւն ցանել . . .
Վա՞յ իրեն . . . Վարազօրէն, վաղն՝ այսօրէն կը դիմաւորեն :
Որ ըրյանէ վաղն՝ ապաէն, սատակն հե՞ղ մ'ալ կը սատակեն :

Եւ արդ, նակատն ապառաժին, հրվէ՛ժ առկախ ու կարմիր՝
Գոռ Սուսերն Յաւերժին՝ որ կ'արծարծի անծայրածիր :
Կը բլշակնին աշխերը ժիտ, կ'ոսկեվառի՛ն սրտեր վրնիտ . . .
Ու նառազայրներն իր կը մըխըրնին՝
մինչ հեռաստանն Ազառնիին դարակիր :

ՎԱՀՐԱՄ ԹԱԹՈՒԻ,